

ՔԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՊՐՈՒԹԻՒՆ
 Պուլխարիոյ համար 12 ծր.
 Տարեկան 6 »
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի համար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ար.
 Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆՈՒՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրանուցան տողը առաջին
 որակին համար 40 սանթիմ
 է . իսկ վերջին երեսի համար
 20 սանթիմ է . երկրորդ
 սանթիմը սակաւներու համար
 20 Օլգ զեղջ կըլայ .
 Վառուսի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՌՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկեյ
 Խմբագրութեան հասցեին
 —
 Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)
 —
 «Шаржумъ»-ի և յն սրահ
 Արտասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուլխարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ . ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄՈՐԵՐԸ

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ԽՆԴԻՐԸ

Բացէք Պուլխարիոյ և Թիֆլիսի թերթերը, ազգային լուրերու բաժնին մէջ պիտի հանդիպիք անպատճառ եկեղեցականի մը գայթակղեցուցիչ արարքին : Կրօնական ժողովին ամէն օրակարգին մէջ կայ անհրաժեշտօրէն և կարծես պիտի մնայ եկեղեցականներու անվերջանալի խնդիրը : Տիրացու Տակդիրը մեր վրայէն բոլորովին նետելու ժամանակը չէ եկած տակաւին : Պարագաներու բերումով կրօնական ազգ մը կը կազմենք առժամայէս : Թուրքիոյ մէջ ունինք իբր պաշտօնատեղի պատրիարքարանը, և վարիչ՝ վեզարաւոր մը : Այս ոչբայի գրութիւնը որչափ տեսն տեւէ, այնքան տեսն անպակաս պիտի ըլլայ մեր մէջ կղերականներու խնդիրը : Քանի որ կայ շարժառիթը, պիտի ըլլայ բնականաբար խնդիրը, վասն զի ասոնք երկուքը անքակտելիօրէն իրարու օղակաւորուած են : Յանցանքը սակայն վեզարաւորներու չի վերագրենք : Յանցաւորը ուղղակի հայ հասարակութիւնն է, վասն զի մեր նախնիքները իրենց հաստատած օրէնքներուն համաձայն՝ շատ ու շատ բարեմասնութիւններ կը պահանջէին եկեղեցական պաշտօնեայէ մը, գեռ զանիկա պաշտօնի չի կոչած : Բայց հիմա հայ հասարակութիւնը, ըլլա՛յ Թուրքիոյ ըլլա՛յ արտասահմանի մէջ, անոնց ընտրութիւնը թողած է մէկ քանի ազգեցիկ ազաներու կամայականութեան : Թուրքիոյ մէջ պիտի շարունակուի այս ֆլաւակար և աղետաբեր դրութիւնը, բայց արտասահմանի մէջ իսկապէս կը տարբերի խնդիրը : Հոս ամէն անհատ կատարեալ ազատութիւն կը վայելէ խօսելու, գրելու և շարժելու : Ժողովուրդը ինք պէտք է վարէ իր բոլոր գործերը, պէտք չէ երբէք թող տայ որ վեզարաւոր մը միջամտէ իր ազգային կրթութեան և յեղափոխական գոր-

ծերուն և շարժումներուն, յարգելով սակայն միշտ բացառութիւնները : (*) Արդէն մարդկութեան բառազիտները եղած են և պիտի ըլլան, չենք գիտեր տակաւին որքան ժամանակ, կրօնական կոչուած այդ անգործ մարդիկը, ի՞նչ կընեն ասոնք : Կաղօթեն որպէս թէ, սակայն աղօթելու ժամանակը վաղուց անցած է : Գոհ և շատ գոհ պիտի մնանք որ այդ սեպուլտները իրենց սղօթատեղիին մէջ սահմակած մնան, քաջապէս համոզուած ըլլալով որ ասոնք չի նկատ տեղ պիտի քանդեն և խաղաղութիւն սփռելու ակնարկ չունենան : Մասնաւորելով մեր սեսութիւնը, մէկ քանի տարիներէ ի վեր Պուլխարիոյ հայ գաղութը զերծ չէ տէրտէրի կռիւներէն և վարդապետի խնդիրներէն : Ինչ երէկ հոս, Վառուսի մէջ, Տ. Գեորգի խնդիր մը, այսօր ալ վերստին Տօպրիչէն և Նումլայէն խմբագրութեան կը հասնին գայթակղեցուցիչ լուրեր քահանաներու մասին : Շումլա Տէր Օհան Անդակունին, անհատի մը կողմէն կրած անարգանքի մը համար՝ կառավարութեան կը դիմէ և նիւթական հատուցում կը պահանջէ : Հայ գաղութը կը յուզուի կուսակցութեան կը բաժնուի, Օհանական և հակաօհանական, պատրիարքարան կը գրուի, Պուլխարիոյ այցելու հովիւը կը հրաւիրուի Շումլա, գործին անմիջական ելք մը տալու և յուզուած կիրքերը հանդարտեցնելու մտադրութեամբ : Բայց, ինչպէս որ կիմանանք, խեղճ ծերուկին բոլոր ջանքերը ապարդիւն կը մնան : Հոչակաւոր Նիկոլին ցաւալի միջազգէպին մէկ մանրանկարը տեղի կունենայ այսօր Շումլայի մէջ : Հարկ չի կար, և չի կայ ալ պատրիարքարան դիմել, այցե-

լու հովիւին միջամտութիւնը խնդրել այդ տեսակ կղերականները կարգի բերելու համար : Դարձանք մենք մեր ձեռքով հոգալու և կատարելու ենք անմիջապէս : Մանրակրկիտ և խզճաճիտ քննութեան մը ետքը՝ երբ ստուգուի որ յանցաւորը քահանան կամ վարդապետն է, պէտք է զանիկա անմիջապէս դատապարտել : Համայնքին իբր մէկ քոտտ անդամը չէզոքացնել, եկեղեցիին և տուներու սեմէններս չընդունիլ, մէկ խօսքով ժողովրդեան միահամուռ, արդարացի սնածութեային ենթարկել զինքը : Եւ արտասահմանի բոլոր հայաբնակ քաղաքներուն մէջ միեւնոյն արհամարհական վերաբերումը ցոյց տալ հանդէպ այս տեսակ կղերականներու, որոնք իրենց սեւ վերարկուներու տակ սեւ սրտեր կը կրեն, և որոնք ժահրալից իծերու նման հոս ու հոն կը սպրդին անպատկառ : Ալ կը բաւէ ձեզմով զրազիլ արտասահմանի մէջ, տէրպապաներ և վարդապետներ : Այո՛, ձեր կոչումին մարդերը չէք, գիտենք, անգամ մը անցուցեր էք զլուխնիդ փակեղը կամ վեզարը, սահմակեցէք, տեղերնիդ նստեցէք, աղօթքնիդ լուրձեցէք, մի մտնէք հասարակութեան գործերուն մէջ, ազատ թողուցէք զինքը ձեր կոկոսցներէն և անվերջանալի խնդիրներէն : Վասն զի անիկա ալ ունի իր ամենօրեայ հոգերն ու վիշտերը : Ականջ ունեցողը թո՛ղ լսէ : ԴԱԿՈՒ

նիլ կրթական ու եկեղեցական գործերուն որոնք իրենց հրակողութեան յանձնուած էր : Միեւնոյն ժամանակ կարգ մը մարդիկ փոխանակ «Համազասպի» գրութեանց ո՞ր աստիճան ստոյգ ըլլալը քննելու, խենթ ու խելար պոռչտութեանով կուզէին յուզուած խնդիր մը փակել և իրենց անցեալը չբնազդել : Եւ սակայն նորանոր գէպքեր կուգան հետզհետէ հաստատել «Համազասպի» գրածները տեղւոյս հոգաբարձութեան թուրութեան մասին : Յիշատակեմ միայն անցեալները պատահած գէպք մը : Տեղւոյս Տ. Խաչատուր քահանան անձնական տկարութեան պատճառաւ Պուրքէջ ուղեւորեցաւ ի հարկէ թաղականներու թոյլալու թեամբ : Իր մեկնելէն երկու օր ետքը տեղւոյս պանդուխտ ազգայիններէն Կարապետ Ասատուրեան անունով 20 տարեկան երիտասարդ մը Քղի Օրօր գիւղէն, հիւանդանալով հիւանդանոց փոխադրուեցաւ և երեք օրուան մէջ մեռաւ : Մեր պատուարժան թաղական խորհուրդը ոչ մէկ տեղէ քահանայ բերել տալ չուզեր, առարկելով թէ Սուլիմայի մէջ օտար կղերներ չեն պակսիր : Սակայն մեռնողին ազգականները չուզելով իրենց պապանական մայր եկեղեցիէն զրկուիլ, ստիպեցին որ անպատճառ հայ քահանայ մը բերուի : Աստիճալ թաղականները ճարահատած նախ թուլա հեռուգրեցին, որպէս զի տեղւոյն քահանան գայ և թաղումը կատարէ, բայց թուլալ քահանան ալ բացակայ է եղեր, ուստի հեռագրուեցաւ Պապատաղ, որուն քահանան ալ չի բարեհաճեցաւ նոյնիսկ պատասխանել : Այլևս յուսահատ գիւմեցին տեղւոյս ուսմէն կղերին, որ չընդունեց հայերուն առաջարկը ըսելով թէ, քանի որ քաղաքին մէջ հայկական եկեղեցի կայ, չի կրնար առանց իր մեծին հաւանութեան ու է կրօնական կարգ կատարել հանդուցեալին վրայ : Ամէն տեղ հեռագիր տը-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒԼԻՆԱ . 7 Մայիս
 «Նարժում»-ի ընթերցողներուն արդէն յայտնի է «Համազասպի» ստորագրութեամբ տեղէս երեւցած մէկ գրութիւնը որով յօդուածագիրը կը քննադատէր տեղւոյս պատ. հոգաբարձութեան անտարբերութիւնը գէպի իրենց ազգն ու եկեղեցին, և կոչ կընէր անոնց ըստ կարելոյն հոգ տա-

Պ. Սլաֆի ուղարկութեան կը յանձնենք այս սողերը : Կ. Խ.

ուին քահանայ մը գտնելու հա-
մար, բայց ի վերջո՝ բոլորն ալ
սատանին ծակը մտեր էին կար-
ծես: Ինչպէս իր բարեկամները
տեսնելով որ մեռելին երեքու-
եայ գլխակը սկսած է հոտիլ,
զայն կառք գրին ու առանց քա-
հանայի գերեզմաննոց սարին:
Երբ ննջեցաւ քոչոցներէն
կանցնէին, օտարազգիները խճու-
նուած կը հարցնէին թէ ի՞նչ
գտանքներ կը պատկանի մեռ-
նողը, որովհետեւ ոչ քրիստո-
նէին քահանան կար, ոչ թուր-
քին մոլլան, ոչ հրէային խախա-
մը:

Ամօթ չէ՞ օտար երկրի մը մէջ,
այն ալ Ռուսներոյ պէս տեղ մը,
ազգին վարկը քանի մը թաղա-
կան աղաներու անհոգութեան
պատճառաւ այս աստիճան ստոր-
նացնել:

Քանի մը օխա խուկեց և քանի
մը ծարր մոմ առնելով չէ որ, ա-
ղաներ, թաղական պիտի ըլլաք:
Դուք աւելի քան ոչ ոք, պար-
տական էք ձեր պատկանած հայ
հասարակութեան վարկը միշտ
բարձր պահել, ամենաշնչին կե-
տերու մէջ իսկ նախանձախնդիր
ձեւացնելով ինքզինքնիդ ազ-
գային արժանապատուութեան
պահպանումին: Աւ մենք միշտ
իրաւունք ունինք, զիշտ պէտք
է հարուածներ շնորհ, երբ կը
տեսնենք որ, ձեր անհոգութեամբ
ձեր կործանարար կամայական
նութեամբ մեր օճախը կը մարէք,
մեր հոգիները կը վառէք:

ՎԱՀԷ

ԿԵՂԾԱՌՈՐՈՒՄՆԵՐ

Փարիզեան թղթակցութիւն մը
գրել չէ նպատակաւ Շարժումին եւ ոչ
ալ անոր ընթացողներուն տեղա-
կան բարձրուն լրջկութիւններու
վրայ տեսութեան մը զգուանքը
պատճառել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՕՆԹ ԿԼՈՒԹՈՎՍԿԻԻ ՏԵԼԵԿՐԱԳԻՐԸ

Քօնթ Կլուսութեան, Աւստրիոյ ար-
տաքին գործոց նախարարը, անցեալ
շաբթու շուկայական Պատուիրա-
կութեան արտաքին գործոց յանձ-
նախուժութիւն ներկայացուցեր է իր
տեղեկագիրը պետութեան արտաքին
քաղաքականութեան մասին: Նախա-
րարը մանրամասնօրէն խօսած է այն
ընդեր խնդիրներուն վրայ, մեծ թէ
պղտիկ, որոնք ուղղակի կամ անուղ-
ղակի Աւստրո-Հունգարիան կը հե-
տաքրքրեն արտաքին քաղաքակա-
նութեան մէջ: Երեակ Նիդերլանդու-
թիւնն ու վաճառականական դաշնա-
գիրները, Ռուսական համաձայնու-
թիւնը, Պալքանեան գործերը, Չի-
նական արշաւանքը, Նախարարը
մասնաւորապէս շեշտած է կայսրու-

կեղծաւորութիւնը ազգայնական
կողմերը կողմէ շօշափել, ուր ե-
րեւոյթներու ամբարտակը նսեմ ու
սարսուցողութիւն խոթողութեան մը
ստուերը կերկարաձգէ: Աւ այս
ստուարացող, թանձրացող խաւարին
չեղանակները օր քան օր կը բրգանան
ու մահաճաւ ստուերութիւնը կործա-
նարար ուրուականները կը յաւեր-
ժացնեն:

Մահին անստուգեան մէջէն քաղա-
ու իր թարմ, խորունկ ու լայն
վերքերու սպիտակութիւնը մեր
ժողովրդին զեղ ու դարման հասցնե-
լու հոգը ստանձնելէ առաջ ի՞նչ տա-
կաւին կան պարտականութիւններ,
որոնց գիտակից կատարումովը այդ
քաղաքները — արեւը ցամաքները,
արցունքը սրբել — լոյս արեւ պիտի
տեսնէ: Հայը կարի հոն՝ ուրկէ
վարուած են հանգիստ, հանգստու-
թիւն: առն չունի պատասպարուելու
համար եւ ուր կարենայ պահ մը իր
ճշմարիտ վիճակին գիտակցութեամբ
սարուբերիլ, արհաւիրքի ու բան-
դազուշանքի ենթարկուած իր գոյու-
թեան տարածութեան մէջէն:

Բայց ո՞ր ունի հիւրըկալու-
թիւն Հայը: Մայրենի երկիրը դժուար
մը դարձած ճիւղներու խրտուի-
նի կարճադանգէ: Հեռու հայրենի-
քէն՝ օտարութեան չունչը խիստ
դառն անվերապահութիւնով կարիւ-
նուէ ու կը խոցէ, մինչեւ խորը,
տոհմային զգացումներով անած եւ
ուռճացած հայուն փափուկ ու զթոտ
սիրտը: Ամէն բան թախիճ կը դառ-
նայ, ամէն բան դառն յուսախտու-
թիւն մը կենցաղը, ու հարածա-
կան հոգին, իրականութեան մէջ,
երազի ու զառանցանքի գիտային
յափրացումը կուենեայ:

Տուն չունինք ոչ մէկ կողմ...
Երբ այս սխուր ու կենսական
պատկերը կը մտատրպարենք, երբ
այդ գոյութեան կոխը կը հետա-
պնդենք, բնական մղումով մը ձեռք
կը կարկանդակ Սուրբ գործին, Յե-
ղափոխութեան, որ ինչպէս միշտ,
պիտի ազատագրէ մարդկութեան ընկ-
ճութիւնը, ստրկացած հոգեմտները,
իւրարակույ մտքերը: Գիտութիւնն
է ան, ինքնին, գիտութիւնը՝ իր բո-
լոր պերճութեամբ ու հմայքներովը
առլուած... Այս պէտք է ըլլայ
ամէն հոգիով հայրու նշանաբանը:

Բայց որչափ ցանցառ է այդ կո-

թեան հետեւած քաղաքականութեան
խաղաղասէր նիկարագրին վրայ:

Մասնաւորապէս իր յայտնութեանց
մէջ նշմարելի կըլլայ Ռուսիոյ եւ
Աւստրիոյ համաձայնութիւնը Պալ-
քանեան մէջ իրաց վիճակը անփո-
փոխ պահելու համար: Կլուսութիւն
Պալքանեան երկիրներու հետեւած
քաղաքականութեան մասին խօսե-
լով, ձգտած է իրերը սեւ գոյնով
տեսնել, եւ ասոր պատճառը ան ըն-
լայ թերեւս որ, Աւստրիա կը զգայ
իր ազդեցութեան մեծապէս կտորիլը
Ռուսիոյ ձեռքով, թէ Պուլկարիոյ եւ
թէ Սերպիոյ մէջ:

Ահաւաստի իր ճտուն գլխաւոր
գծերը:

Չիլիասան. — Նախարարը բա-
ցատրեց Չիլիասանի կացութիւնը
կռիւն սկսելէն ի վեր: Աւստրիա
հետեւացաւ պետութեանց միացեալ
գործունէութեան, բայց միշտ իր շա-
հերուն ներածին չափով: Ուղղադու-
թեան բանակցութեանց մասին խօ-
սելով, Կլուսութեան յայտնեց թէ չի

րովի համոզումին գրաւականը ստուղ
պարզերեսներու թիւը:

Դասալքութիւններ, մեղկացած հո-
գիներու շահախնդիր նպատակաւոր-
ութիւնները արտացոլեցին այդ նուի-
րական գործին մէջ, ու միշտ միեւ-
նայն վերապային խորհուրդին մէջ
խմորուող նոյնատիպ այլասեղող հո-
գիներ, տարբեր ձեւերու տակ, տար-
բեր գոյներով ուղղութիւններ փրն-
տեցին իրենց նենգաւոր շահասա-
կութիւններուն, սխառմէտ որկո-
րին թիւումներուն հասնելու համար:

Փարիզը ներկայութիւնը վայելց
այդ ժամտաժող բախտախնդիրնե-
րուն, որոնք միջավայրին բազմա-
թիւ ու ընդարձակ ծախքերուն մէջ
աւելի ճարակ պիտի գտնէին, աճէին՝
բոյն գնելու համար:

Փարիզը՝ երբեմն առեւտրասէր հա-
յերու շահագործութեան ու հարստա-
ցումի վայրը, այսօր կապանքներէ
ճողոպրած ապերասան ճիւղակիւր-
ներու Աւրազանը կը դառնայ:
Կուգան հոն գայտիլ հայեր, վատթար
հոգիի մը յարակցելով ռամիկ անբա-
րոյականութեան գեանաքարչ կեն-
ցազավարութիւնը, ու հայկական այս
զազրութեան քովի ի վեր կը կարգա-
դիպուի ուրիշ շարք մը ինֆլուան-
ներու, որոնք խիստ եղբարական գոյ-
նով մը կերանգին մեր ցեղային ան-
ձանօթ պատկերը:

Դիմակազերծ երբեմն յեղափոխա-
կանին քով տնկուեցաւ ինֆլուանցի
հայրենասէրը, ու սթողուած կեղծա-
ւորութիւնը զիրար գրկախոսելով
բաւական ստուար թիւ մը հայ, եւ
փարիզեան հայ կեդրոն մը կազմե-
ցին, որուն շուրջը կը յաճին լատ-
տեսներու կամ հեռուէն տեսնող ինք-
նապատիրներու տարուղղուած յու-
սադրանքները:

Իրերու այս սխուր կացութիւնը
անխուսափելի հետեւանքն էր մար-
տիրոսացած ժողովրդի մը տառա-
պանքներուն, որուն առջեւ պէտք
էր որ տեղի տային տկար կամքերը
եւ ուրկէ պէտք էր որ ոգուելին գայ-
լակերպ ստրկացածները: Բացի այն
դասակարգէն որ Փարիզի հին հայ
զաղութիւնը կը կազմէր ու այն երիտա-
տասարդներէն, որ հոն ուսումով մը
կամ արուեստով մը մշակուելու պա-

կրնար առանց վերապահութեան խօ-
սիլ, քանի որ գեռ վճուած հարց
մը չէ ան, իր կարծիքով, պէտք է աշ-
խատիլ բոլոր տուգանքը մէկ անգա
մէն գանձելու:

Պայմանաւ ճամբակալիդի. — Նա-
խարարը յայտնեց թէ կարելի եղած
է, հակառակ յաճախ երեւցած ան-
հանգստացուցիչ նշաններուն, ապա-
հովել զէպերու խաղաղ ընթացքը,
բայց չէ կարելի բոլորովին ապահով
ցուցնել նաեւ ապագան, քանի որ
նոյնիսկ Աւստրիոյ եւ Ռուսիոյ մէջ
1897ին գոյացած համաձայնութիւնը
միշտ չի կրնար ազդու ըլլալ, եւ չա-
փազանց լաւատես ըլլալու է ամէն
անակնկալներու հանդէպ բանասէ մը
նկատելու համար զայն: Երբէք
Աւստրիա չի բաղձար հողային ու եւ
չաճ ձեռք բերել ի վիշտ ուրիշ տե-
րութեանց, ով որ այդ տեսակ առաս-
պելներ տարածելու նուազ փափու-
նկատութիւնը ունեցած է, լով հա-
սարակաց կարծիքը Աւստրիոյ զէմ
զրգուելու նպատակով է:

ցած էին, այդ մտաւոր կեդրոնին
մէջ լոյս աշխարհ տեսան եօթը մա-
հացու մեղքերու ամբողջութիւնը
տիպարող զէմքերէն զուրս՝ ու թերեզ
մը եւ ինչներորդ մըն ալ «գեռ ոչինչ
բող» զրգուներ, որոնք ինքնակոչ
բարեացականութեամբ մը հրաւիրե-
ցին զիրենք պաշտօններու, որոնց
ձանրանուր պահանջումները խրա-
ու իրական պիտի թուէին խղճամիտ
գործիչներու մերձեցումը երուն:

Աւ այս օտար միջավայրին մէջ
«անստգիտ» մարդերու տարօրինակ
չեղակոյտ մը, ճշմարտութեան տա-
րազը կեղծիքին հագցուցած կը գործէ,
— որչափ ալ գործելու ու մանելու
բաներ կան եղեր — մարդեր՝ որոնք
նրբացած ինտելեկտներու հաշ-
գանակը գոց գիտեն արդէն եւ ու-
րոնց անբարոյական ու սխրահոյակ
անցեալը գեռ երկկի ճշմարտութիւնն
է, Բայց թողէ՛ք որ ապրին անոնք,
ամէն միջոց թող սալով իրենց,
բայց ապրին շաքարոտ թէյով մը ու
գինովցնող «նարկիլէնով» մը, ան-
զոյն արարածներ այսօրուան պաշ-
տածին զաղը ու բանալու ու, վազը
փայտալածին, զոր երկէ կը զրպար-
տէին, աստուածացնել պատրաստ:

Քանի՞ներ կրնայի թուել այս այս
մարգակերպ հրէշներն, եթէ թող
տայի ինձ հրապարակաբար կան խրա-
տուութիւն մը: Բայց ցուային հոն չէ
որ այդ զրգուները գոյութիւն ու-
նին, — ասի բնութեան մէկ ան-
խուսափելի վիժումն է, — այլ հոն
որ անոնք փողոցի սիւղը կը նեւան
ամբողջ ժողովրդի մը երեսին, որով
իրենք ձեռքովու են:

Աւ այն անպակաս միջոցներէն ու-
րոնցմով կրնային անոնք գետնա-
քարչ կեանքներին երկարել, բնա-
րեցին ամենէն ազնուագոյնները,
նովանաւորուելու ատենց չուքին
տակ, իրենց անպատկառ մերկու-
թեան պաշտիրները անշուքարի գա-
ձնելու համար:

Աւ հիմնեցին նոյնիսկ թերթեր,
քաղաքագէտ, ազգասէր, մաքի ու
հողի մասնագէտ, սխառներով, ու
չուհագործումը իր հայկական յրջա-
նակներէն զուրս հանելով օտարե-
րու մէջ սահեցուցին:

Աւ յաջողեցան անպատկառօրէն
արժանիքը խեղաթիւրել, զգացումը
չահագործել, քանի մը օտար ու
անարժէք գումարներ գրպանել, ու

Աւստրո-Հունգարիա ու եւ է հողային
չան չի պահանջելէ զատ, չի կրնար
ներել որ իրաց արդի վիճակին զէմ
ո եւ է ձեռնարկ կատարուել, եւ ոչ ալ
թող սալ որ իր շահերուն վիշտող
կամ իր մեծ սէրութեան զիրքը
խախտող փոփոխութիւն մը կատար-
ուի:

Ասիկա պիտի ըլլայ Աւստրո-Հուն-
գարիոյ արեւելեան քաղաքականու-
թեան գլխաւոր ուղղութիւնը, որ
չի պիտի վարանի ընդդիմանալ իր
ընդեր ուժով ամէն պատահականու-
թեանց Այս կէտին մէջ տարակուսիլը
աւելորդ է:

Պուլկարիակ յուղու ը. — Պալ-
քանեանքու անհանգստացուցիչ զէպ-
քերէն ետքը, այսօր Պուլկարիոյ մէջ
է որ յուղումը կը տիրէ Մակեդոնա-
կան խնդրին խառնուած, ինչ որ
Աւստրիոյ ուշադրութիւնը կը հրաւիրէ
զլխաւորապէս, վտանգի այդ վիճակը
կը սպառնայ վտանգել «ուլկարիոյ յա-
րաբերութիւնները իր գերիշխան պե-
տութեան հետ եւ միւս կողմէ, չա-

կը Հայաստանի սպանանացոյ ար-
ուիքները սասանելու համար, իբր
է իր պարզ գիտութեամբ, Քրիստոս-
ան զրահաւորները Լիփանի բար-
ւնքէն մինչեւ Մասիսի կատար-
րը հանեց... Որքան անձնուէր
կարող գատարկութիւններ, եւ
զուշ գործիչներ!
Կարող եղան վերջապէս սպանու-
սնել, — առանց խոտովանանքի,
խմար լպիրտութեամբ մը, — այդ
պայտար հերոսները իրենց զրկուած
նընդունակութիւնը քաղաքագի-
ական հպումներու ու շորիկութիւնը
վրած ու բռն ինչպատակի մը:
Արդիւնքը՝ որուն պիտի հասնին՝
նոր գատին ինքնանուէր այդ լուս-
տառ ու քաղցած մտաւորները, այն
իմաստագիտութիւնն է ուր իրենց
երկարամտաց խոցոտութիւնը ընդ-
անուրին անողք արգահատանքին
վրա յարժանանայ:

ՀԱՅՈՐԴԻ
Փարիզ, 12 Մայիս

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆԳՔՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. նախ. թիւնն եւ վերջ)

Այս ծեծը կը գործադրուի ա-
մէն ատեն որ գատարանը ոստի-
կանութիւնը, բանտին պետը կամ
կառավարիչը հարկ տեսնեն:
Դահլիճը կը շարժուի ի բանտարկեալ-
ներուն մէջէն, ամենէն ուժեղը
որուն ձեռքն է պատժապարտին
ճակատագիրը: Խարաղանը կը
բաղկանայ փայտէ հաստ գաւա-
զանէ մը որուն ծայրը պինդ կեր-
պով հաստատուած է հիւսուած փոշի
մը իբր 35 հարիւրորդամէթը
երկայնութեամբ եւ երեք մաս
հաստութեամբ որ կը վերջանայ
երեք հաստ պոչերով: Այն
բանտարկեալը որ իր մէջը դեռ
կը կրէ մարդկութեան ամենու-
փոքրիկ մէկ զգացումը, չպիտի
ուզէ ստանձնել գահիճի պաշտօնը
եւ բանտպետը ասիկայ գիտնա-
լով է որ կը ստիպուի միայն այն ան-
ձերը որոնք կոյտ, անզգայ եւ
անբան են:

բաշտք ազդեցութիւն մը ստալ մե-
րի կարգ մը ուրիշ պետութեանց
վրայ, ինչէ լոկ յեղափոխական կոմի-
թէներու արարքները կը ցան այնքան
ցրտութիւն առաջ բերել Սօֆիայի եւ
Պուրթիւի միջեւ, կարելի է դիւրաւ
մակարկել թէ ի՞նչ ցաւալի կացու-
թիւն մը պիտի առաջ գայ, եթէ սուր
վէճ մը ծագի:

Պետութիւնները չի յապաղեցան
բուռն ազդարարութիւններ ընել
պուլիար կառավարութեան որ ան-
շուշտ քիչ մը յանցաոր գտնուեց
արդի կացութեան մէջ շատ թոյլ
վարուելով:

Փափագելի էր որ պուլիար կառա-
վարութիւնը այսուհետեւ պարկեշտ
ընթացքով մը վարչական բարեփոխ-
ման գործադրէր: Մակեդոնիոյ կուսա-
կալութեանց մէջ, թէեւ թուրք կա-
ռավարութիւնը ճնշողական միջոց-
ներ գործադրած է, բայց ասոնք չեն
կրնար տեսական խաղաղութիւն մը
ապահովել:

Բարեբախտաբար Պուլիարիա մտիկ

Այդ գահիճին ձեռքն է յան-
ցապարտը խեղանդամ մը կամ
անշունչ զիակ մը դարձնելը ա-
ռանց երբէք իշխանութեանէն
ու է պատիժ կամ յանդիմանու-
թիւն վրեժու, եւ փորձառու գահիճ
մը յարգանք կը վայելէ միշտ իր
չըջանակին մէջ: Իշխանութիւնը
կը պատու իրէ միայն ուժով զար-
նել բայց ոչ արագ, ահա բանա-
ձեւը: Սարալինի բանտերէն մէ-
կուն պետը որ մը քննադատելով
գրացի բանտի մը մէջ գործադ-
րուած պատիժին թեթեւութիւնը
հետեւեալ ձերպով կը նկարագրէ
իր գրութիւնը «Յանցաւորը կա-
պել կուտամ, յետոյ կը վառեմ
սիկարէթս եւ կը սկսիմ ժամացոյ-
ցի մը կանոնադրութեամբ պաշ-
տի սրահին մէկ պատէն միւսը:
Գահիճը գիտէ գրութիւնն եւ ամէն
ատեն որ պատերէն մէկուն հաս-
նիմ հարուածը կ'իջեցնէ, Ուրիշ
մէկը որ մը զմզմեցնելով գա-
հիճի խարաղանին թոյլ գործու-
նէութեան, կառնէ ձեռքէն խա-
րաղանը եւ ձեռքովը յանցաորին
կանակին կ'իջեցնէ իբր օրինակ:
Իսկ ուրիշներ եղած են որոնք
չարաչար պատժած են գահիճը
երբ անոնք են թէ փափաքուա-
ծին չափ ուժով չի գործադրէր
իր պաշտօնը, այսպէս գահիճ մը
բանտապետին հրամանովը, ան-
գամ մը, այնքան ծեծուած է որ
ետեւոյքը ամբողջ փտտած է թա-
փած է:

Գատարանի ծեծելու կը գատա-
պարտէ ընդհանրապէս կրկին
յանցանք գործողները, Սիպե-
րիայէն փախչելու փորձողները,
փախչելէ վերջ բռնուողները եւ
բանտին մէջ անհանդարտ կեցող-
ները եւայլն: Շատեր կան որոնք
կեանքերուն մէջ մինչեւ 5—600
հարուած ստացած են: Ժերունի
դատարկապարտ մը կը պատմէ
թէ 1400 գաւազանի հարուած,
600 խարաղանի եւ անթիւ քանա-

կընէ իրեն տրուած խրատները, եւ
վերջերս միջոցներ ձեռք առած է
վերջ տալու համար կոմիթէին ա-
րարքներուն, որ երկրորդ գաղանի
կառավարութիւն մը եղած էր:

Ճանկալի է որ Պուլիարիա իր խոր-
հուրդները փոխէ, պէտք է իրեն
խրատել որպէս զի յարատեւէ նոր
ձամբուն մէջ ուր մտած է արդէն:
Այն ատեն Պուլիարիա կրնայ հաշուել
Եւրոպայի համակրութեան վրայ, հա-
մակրութիւն մը՝ որուն սրժէքը
ինք առիթ տեսցած է գնահատե-
լու:

Սերպիա. — Սերպիոյ մէջ, կը
կարծուի որ կարելի պիտի ըլլայ
կացութիւնը բարեփոխել նոր սահմա-
նադրութիւն մը կազմելով: Յաջո-
ղութիւն կը մտածենք իրեն, յու-
սալով միանգամայն որ Սերպիա պիտի
զգուշանայ այն ամենէն՝ որոնք կը բ-
նան իր Աւստրիոյ հետ ունեցած յա-
րաբերութեանց միասել եւ մեր բար-
եացակամութիւնը իրմէ հեռացնել:

Երեւակ նիզակալիցաթիւն. — Գալով

կուլթեամբ ալ ձեռքի եւ ոտքի
հարուած ընդունած է:

Սակայն բոլոր այս խժոյժու-
թիւնները դրական արդիւնք մը
ստած չեն, ինչպէս ցոյց կու-
տան Սիպերիոյ բանտերուն վի-
ճակացոյցներն: Պատիժները որ-
քան շատցած եւ խոտացած են,
յանցաւորներն ալ այնքան բուզ-
մապատկուած են մանաւանդ երկ-
րորդ անգամ կրկին յանցանք
գործողները:

Երկրախոր (նոսթալմի) որ
մեծամեծ համեմատութիւններով
կը ճարակէ սիպերիական ար-
տիւններուն մէջ եւ որ արդէն
մարդուն բնութեան եւ սրտին մէջ
գամուած կայ, մտիկ չընէր պա-
տիժներուն ու շատ անգամ պատ-
ճառ կը լլայ որ իրմէ բռնուող-
ները գրեզման մտնեն:

Սիպերիոյ մէջ խարաղանի
պատիժէն զատ, կայ նաեւ քանա-
կակոծութիւնը զոր գործադրե-
լու համար ոչ գատարանի վճիռ
ոչ կաւակալի հրաման, եւ ոչ ալ
բժշկին արտօնութեանը պէտք
կայ այլ լոկ բանտային ներքին
վարչութեան քմահաճոյքովը կը
կատարուի: Եւստ պարզ պատիժ
մը ենթադրուած է ասիկա ու օրա-
կան հացի նման սոէպ կը հրամ-
ցնեն բանտարկեալներուն որոնք
այնքան մահահոտ կերպիւ կալ-
դուին անկից որքան խարաղա-
նէն: Ամեն բանտապետ ամենա-
փոքրիկ պատճառով մը կը բ-
նայ 30էն մինչեւ 100 հար-
ուած հրամայել, ու հիւանդ մը
երբէք ազատ չէ այս պատիժէն:

Քօրսաքօֆի շրջանակներուն
մէջ յիշ կ'իմ մը իր մարմնոյն ա-
մէն կողմերուն վրայ ընդունե-
լով այդ հարուածներէն քիչ ետ-
քը իր հոգին աւանդած է:

Ինչ որ կայ միտիթարական սա

Աւստրո-Հունգարիոյ արտաքին քա-
ղաքականութեան ընդհանուր դժե-
րուն, քոնթ Կլուխովսքի կը հաս-
տատէ թէ կառավարութիւնը կը շա-
րունակէ իր նիզակալիցներուն հետ
ներգաշնորհէն ընթացել: Միան-
գամայն կը հաստատէ միւս պետու-
թեանց հետ յարաբերութեանց ամ-
բողութիւնը, եւ մասնաւորապէս Ռու-
սիոյ հետ:

Երեւակ նիզակալիցութեան վստա-
հութիւնն ու համերաշխութիւնը
խախտելու նպատակաւ յերիւրու-
նենդամիտ ազմուկները այնքան թա-
փանցիկ են որ կրնան շուտով ճանչ-
ցուել: Նախարարը կը յայտնէ թէ
Գերմանիոյ եւ Իտալիոյ հետ կնքուե-
լիք անտարակալ գաղտնագրութեանց
պահուն, կարելի պիտի ըլլայ բոլոր
պատահական վէճերու արդար կար-
գազրութիւն մը ձեռք բերել:

Հունգարական պատու իրակութեան

է թէ բանասպաններուն եթէ ոչ
մէկ փոքրիկ մասը բայց գոնէ
մէկ երկու հատը զուրկ չեն մար-
դատիական զգացումէն: Իրքու-
թեակի բանտին նախկին տնօրէնը,
Սիբիական, ծեծը բոլորովին ջըն-
ջած է իր հակոյտութեան ներքեւ
գտնուող հարկերուն մէջէն եւ
այս տնօրինութեան բարերար
արդիւնքը զգալի եղած է: Յան-
ցանքները եւ փախչելու փորձերը
բազմապատար պակասած են ու
վերջ ի վերջոյ Սիբիական որոշած
է բաւական ազատ ձգել բան-
տարկեալները, անոնց աշխա-
տութիւնները յաւկայցելու եւ մի-
այն հակոյտութեամբ բաւակա-
նանալ: սակայն զմբողջաբար
այս օրինակը եզակի մնացած է
ու հետեւողներ չէ ունեցած:

ԷՔՓՕ
Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Փ

Մ. Փափ. Պուրթիւ. — Տ. Մարկի
հայտնի ձեր գրկած 13 ֆր. մանա-
փութը դեռ չենք ստացած, կը խրոյ-
րենք պէտք եղած դիմումը բնէք:
— Յ. Շահրոյ. Կարա Տօֆթանա. —
Ձեր հայտը ճիշդ է, ստացանք զբ-
կանից: Ենթահալու ենք ձեր տա-
ժած համակրութեան:

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Աթէնքի հայոց եկեղեցոյն
հոգաբարձութիւնը հաղորդած
ըլլալով պատրիարքարանին կար-
գալով Սթանուսի շահատակու-
թիւնները, կրօն. մարտիկ որո-
շեր է սեղանական կառավարու-
թեան իմացնել թէ Աթանաս
կարգալոյժ եղած է:

— Բաղէչի վարժարանին մէջ
գորգադործութիւնը զգալի յս-
նալ գիտութիւն ընել սկսած է:
Ազգական վարժարանին թէզի-
եահներուն թիւը 8ի հասած է,
եւ 20 աղջիկ կայ աշխատող:

արտաքին գոյծոյ յանձնախումբը
նպատակաւ ընդունելու թիւն որա-
նախարարին այս յայտարարութեանց:
Մասնաւորապէս հաւանեցաւ Պալատ-
ներու վրայ Աւստրիոյ յաջողութեան
թեան ամբաստանութիւնները ջրե-
լուն եւ ծափահարեց երեակ նիզա-
կակցութեան ամբողջութիւնը հաստա-
տած ատեն: Ասկէ ետքը պատուիրա-
կութեան մէկ քանի անդամները գա-
նազան հարցապնդումներ բերեւ են,
որոնց մի առ մի պատասխաններ է նա-
խարարը: Յետոյ, պատուիրակու-
թիւնը իր կառավարող գոնահալու-
թիւնը յայտնել է քոնթ Կլուխովսքիի
հետեւած քաղաքականութեան:



Երեք թուրք ուսուցիչներ
թուրք կրթական նախարարու-
թեան կողմէ տեղական հայոց
վարժարաններուն մէջ թուրքե-
րէն սորվեցնելու պիտի զրկուին
եղեր :

— Պօլսական թերթերու մէջ
կը կարգանք ուսումնական խոր-
հրդոյ մէկ քանի որոշումները
ուսուցիչներու ապագային ապա-
հովութեան մասին, որոնք որ-
քան գեղեցիկ թուղթի վրայ,
նոյնքան ցնորական ըլլալ կերե-
ւին իրականին մէջ : Ուսումնա-
կան խորհուրդը զեռ իր ծրա-
գիրը հրատարակած չըլլալուն՝
որոշապէս չի գիտցուիր թէ ի՞նչ
տրամագրութիւններով ուսու-
ցիչները պիտի օգտուին անկէ և
ի՞նչ ազբերներու պիտի գիտէ
խորհուրդը իրեն հասոյթները
ստեղծելու համար : Բայց, ինչ-
պէս կէսբերան ըստածներէն կը
հասկցուի Ուսում. խորհուրդը
Օգնութեան Մետոկին ապահովու-
թեան համար ամէն միջոցի պի-
տի գիտէ, առանց արժանապատ-
ուութեան կամ բարոյական հե-
ղինակութեան շատ բարակ հար-
ցերով զբաղելու : Կարող ուսու-
ցիչներէ միանուագ նպաստներ,
ապահովագրական ընկերութեանց
կողմէ և «Ռէքլամ»ի փոխարէն
նուիրուելիք գումարներ, նուա-
զահանգէսներ, թատերական
ներկայացումներ, կտակուած
կամ կտակելի (որովհետեւ զեռ
ուսուցիչներու համար կտակուած-
ներ չի կան ցարգ) գումարներ,
չըջանաւարտի ուսուցչական վկա-
յագրի տուրքեր, ահա Օգնու-
թեան Մետոկին հասոյթի ազ-
բերները, պաշտօնի վրայ զըտ-
նուած ուսուցիչներու տնտեսական
վարձքին այսքան առ հարիւր
վճարման հետ : Անպաշտօն ուսու-
ցիչներն ալ, երբ որոշ պայման-
ներ կը լրացնեն, պիտի օգտուին
Օգնութեան Մետոկէն :

Ինչ որ ալ ըլլայ, Օգնութեան
Մետոկը գոնէ սա օգտակարու-
թիւնը կունենայ որ ուսուցչական
ընտրութեանց կամ փոփոխու-
թեանց միջոցին ազաներուն տ-
մենէն մեծ գէնքը— իրենց հա-
ճելի շեղող ուսուցիչ մը նիւ-
թապէս ընկճել— ալ իր կարեւո-
րութիւնը զգալապէս կը կորսն-
ցնէ :

ՇԵՆԱԳԻՐ ՍԸ

Խմբագրութիւնն քաղաքի մէջիքս
ապահովագրական ընկերութեան գոր-
ծակալ Տ. Յ. Մովսէս հետեւեալ հե-
ռագիրը ընդունած է. Պատ. Թաղ.
Խորհրդին ուղղեալ, զոր հրատարա-
կելով կը սպասենք Պատ. խորհրդին
տալիք բացատրութեանց :

Թաղ. Խորհուրդ Վառնայի
Հայոց Եկեղեցւոյ

Քանի որ չի բարեհաճեցաք
մինչեւ այսօր վճարել գործակա-

լութեանս մօտ ձեր ունեցած ա-
պահովագրին պարտքը, կը ծա-
նուցանեմ ձեզ թէ, «Մէնիքս»ի ա-
պահովագրական պայմանագրու-
թեանց ընդհանուր պայմաննե-
րուն ութերորդ յօդուածին եր-
րորդ փարակրաֆին համեմատ,
այս վայրկեանէն կոչնչացնեմ
ձեր պայմանագրութիւնները թիւ
441.5900—441.5901 և միեւնոյն
ատեն կը խնդրեմ որ բարութիւնն
ունենաք երեք օրուան մէջ վճա-
րելու 158.20 ոսկի ֆրանքի գու-
մարը զոր մինչեւ այսօր կը պար-
տիք ինծի : Հակառակ պարա-
գային պիտի ստիպուիմ գիտել
ուր որ անկ է :

ՄԱԿԻ «ՄԵՆԻՔՍ»Ի գործակալ
Վառնա, 15 Մայիս 1901

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Փօստի խնդիրն ալ փակուեցաւ
առանց և է ձանրակշիռ բար-
գութեանց տեղի տալու ինչպէս
որ կը սպասուէր արդէն : Բոլոր
օտար թղթատարութիւնները
սկսան առաջուան պէս շարու-
նակել իրենց գործառնութիւն-
ները առանց մասնաւոր սուրհան-
գակներու պէտք ունենալու :

— Իտալիոյ գործակատարը Բ.
Գունէն գոհացում պահանջել է
Փրէվէզայի մէջ թուրք սպայի
մը կողմէ իտալացիի մը բնակա-
րանը բռնաբարուած ըլլալուն
համար : Եթէ իտալական կառա-
վարութիւնը գոհացում չի գտնէ
որոշած է խիստ միջոցներու ձեռք
առնել :

— Սուլթանը իրատեսով մը
հրամայեց է որ Բ. Վորաբա-
նակի (Էտիրէն) թնդանօթի բո-
լոր մթերանոցները նորոգուին
և կատարելագործեալ վիճակի
մը մէջ դրուին : Աշխատութիւն-
ները քիչ ատենէն պիտի սկսին :

— Իր գրելու մեքենաներուն
Պոլիս մուտքը արգելուել է :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

«Նիւուզ Վինըր Թակէպլատ»
կը գրէ թէ Պուլկարիոյ և Սեր-
պիոյ մէջ զինուորական դաշնա-
գրութիւն մը կնքուելու վրայ է
Ռուսիոյ հովանաւորութեամբ :

Պէլկրատի Ռուս զեւսպանատան
զինուորական կցորդ գնդապետ
Հէսարճիէֆ Սօֆիա կանչուած է
այդ համաձայնութիւնը կատա-
րելու համար :

«Էնֆօրմասիօն» թերթն ալ կը
գրէ թէ Սերպիոյ թագաւորը
մերժած է Մօնթէնէկրօի իշխան
Միրքօին ի Պէլկրատ այցելու-
թիւնը արդունիլ և արդէն մաս-
նաւոր գիտումով մը չէ՛ շնորհա-
ւորած Մօնթէնէկրօի Նիքօլա իշ-
խանը իր տարեդարձին առթիւ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մայիս 7ին, Ալէքսանտրովսքի
մէջ գործաւորական կարեւոր
խռովութիւններ տեղի ունեցեր
են :

Կէս օրուան հանդիստէն ետքը,
200 գործաւորներ՝ Օպութովի
գործարանէն՝ կը մերժեն աշ-
խատիլ : Տեղակալ Իվանով կուզէ
զանոնք հարցաքննել, բայց ան-
գոհացուցիչ պատասխաններ կը
ստանայ : Տեղակալը կը փորձէ
զանոնք համոզել, բայց գործա-
ւորները գործարանին սուլիչը
կը քաշեն և դագարի նշան կու-
տան և մեքենաները բռնի կը
կեցնեն : Իսկոյն ուստիկաններ,
չինուորներ գէպքին վայրը կը
հասնին : Բայց գործաւորներուն
թիւը հետզհետէ կածի և մինչեւ
3,600 հոգիի կը հասնի, որոնք
աշխատութիւնը ձգելով սկսած
էին դուրս ելլել սուլելով և աղ-
մուկ հանելով : Գործարանին
դռնապանը վիրաւորուեցաւ գոր-
ծաւորի մը ձեռքով որ իսկոյն
ձերբակալուեցաւ և ենթապայ
մըն ալ դէմքէն վիրաւորուեցաւ
ամբոխին արձակած քարերէն :

Կառքերու և հանրակառքերու
երթեւեկութիւնը ընդհատուած
էր, գործաւորները բոլոր տու-
ներուն բակերը գրաւած էին :
Տեղակալ Բալիպին ուստիկանա-
պետը նոր խռովութիւններէ
վախնալով հրաման տուաւ ամ-
բոխը ցրուելու : Ամբոխը քա-
րերով պատասխանեց և զինուոր-
ները ստիպուեցան Օպութովի
գործարանը ապաստանիլ :

Այն ատեն Բալիպին հրաման
ըրաւ կրակ ընելու : Գործաւոր
մը սպաննուեցաւ, 8 հոգի վի-
րաւորուեցան, և ամբոխը ցրուե-
ցաւ :

120 հոգի ձերբակալուելու են :
խառնակութեանց ատեն Բալիպին
ուստիկանապետը գլխէն ու ծուն-
գերէն վիրաւորուեցաւ նետուած
քարերէն, ենթապայ մը և 11
պահապան զինուոր վիրաւորուել
են :

— Բուլնեացի ռուս յնդափո-
խական Բիլէցքի որ 1888ին Պօր-
քիի մէջ Ալէքսանտր Գ.ի երկա-
թուղին գիծէն հանած ըլլալու
ամբաստանութիւնը կը կրէ՝ փա-
խած է Աէն-Նիքոլայի յիմարա-
րանոցէն ուր գրուած էր 15^{րդ} օրէ
ի վեր :

Վեց շաբաթ առաջ Բիլէցքի որ
1888էն ի վեր Ռուսիայէն փախած
էր ներս մտեր է և ձերբակալ-
ուելով Սէն-Նիքոլայի մէջ փակ-
ուած է :

Կըսուի թէ իր այս երկրորդ
փախուստին օգնած է բոլոնիացի
երիտասաբդ բժիշկ Մալուրքէ-
վիչ որ վերջերս այդ յիմարա-
նոցին օգնական բժիշկ անուան-
ուած էր :

— Ինթրսպուրկի մէջ յու-
զումը կը շարունակէ և գործա-

ւոր դասակարգը օրէ օր նա
գործադուլներ և խառնակու-
թիւններ կը ծնի :

Մայրաքաղաքին մէջ և շրջա-
կաները ծանր անկարգութիւններ
կը պատահին : Լրագիրները ալ
գիլուած են մանրամասնութիւն-
ներ տալ եղածներուն վրայ : Մի-
այն պաշտօնական զեկոյց մ
հրատարակուած է Ուպրօֆի կայ-
սերական ծովային նաւարանի
մէջ տեղի ունեցած արիւնյալ
դէպքին նկատմամբ և սակայն
անուղղակի ճամբաներով հաս-
լուելու կապացուցանեն թէ կար-
ծուածին շափ թեթեւ անցու-
չէ այդ դէպքը : մարդու կորուստ
և վիրաւորեալներ շատ կան :
խռովութիւնները կը տարածու-
ուրիչ քաղաքներու մէջ ալ :

Գործաւորները օրական ութ
ժամի աշխատութիւն և վարձատ-
րութեան յաւելում կը պահան-
ջեն :

Ի Տ Ա Լ Ի Ա

Պրէշի, Ումպէրդօ թագա-
ւորին սպաննիչը, իր գտնուե-
բանտին մէջ անձնասպան եղ-
է :

Բանտ մտնելէն ի վեր Պրէշ
մուսյլ բնաւորութիւն մը ստա-
ցած էր : բայց խօսելու անդու-
ժապաք մը ունէր, Երբ կուզէի
լռեցնել զինքը, կը տրտմէր
«քիչ օրէն պիտի զղջաք ինձ
հետ այդպէս վարուելուդ հա-
մար», կը պատասխանէր :

Քանի մը օր առաջ ուղած է
իր բանտապահը սպաննել և զը-
պելու համար Պրէշիին յիմարա-
ղուսպ շապիկ հագցուցած էին
Վերջին օրերս կարծես փոխ-
ուած կերուէր : չէր խօսեր և
կարծես ծրագիր մը կը մշակէր
Վերջին գիշերը տափառէն չոր-
շուան պատրաստած էր, զոր
առաստաղին կապելով ինքզինքը
կախած էր : Իր մարմինը սոսկա-
լի երեւոյթ մը առած էր :

Բանտին պատին վրայ Պրէշի
եղունքով «վրէժ» բառը արձա-
նագրած էր : Իր անձնասպանու-
թիւնը մեծ հետաքրքրութիւն
յառաջ բերած է :

**ԱՄԱՌՆԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍՍ
Հանի Բանաթօ**

«Վառիթէ» խմբին կողմանէ վաղ
գիշեր պիտի ներկայացուի առաջին
անգամ ըլլալով «Որդեսպան» խիստ
բարոյալից բանաստեղծ 5 արար :
«Վասնգաւոր անտառը» խիստ ծիծա-
ղաշարժ գաւեչտ 3 արար :

Նոյնպէս ուրբաթ գիշեր պիտի ներ-
կայացուի «Մասէնայի հարսը» բան-
աստեղծ 6 արար :

«Վարպետորդի Համգա» խիստ ծի-
ծաղաշարժ գաւեչտ 3 արար :

Պարերգ Օր. Մարիքայի եւ Պ. Գ.
Յակոբեանի կողմանէ :

Անէն լիզուէ քանթօներ Օր. Չօի-
ցայի կողմէ :

ОГОВОРИКЪ:
Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность — Варна.